ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևան, Կառավարական տուն 3

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ N 401

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Ջերմուկի տարածքային բաժնի երկրորդ կարգի մասնագետ

(ծածկագիր 3.3-1)

ա/ Բաժնի պետի հանձնարարությամբ կատարում է տնային այցելություններ, հայտնաբերում և հաշվառում է անապահով ընտանիքներին, սոցիալապես խոցելի խմբերին և աջակցում է նրանց դիմելու տարածքային մարմին.

բ/ բաժնի պետի հանձնարարությամբ կազմում է իր սպասարկման տարածքին պաստառուների նպաստների գործերը, պատասխանատվություն է կրում դրանց հավաստիության համար.

գ/ սոցիալական աջակցություն հայցող անձին օգնում է հայտնաբերելու և օգտագործելու դժվարություններ հաղթահարելու իր կարողությունը.

դ/ իր լիազորությունների սահմաններում, ինչպես նաև՝ բաժնի պետի հանձնարարությամբ նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, միջնորդագրեր և այլ գրություններ.

ե/ բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է իրսպասարկման տարածքիփաստաթղթայինսպասարկումը, ապահովում է փաստաթղթաշարժը

զ/ պահպանում է իր կողմից սպասարկվող անձանց (ընտանիքների) սոցիալական աջակցություն տրամադրելու ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը.

է/որպես աջակցող ցանցին երկայացուցիչ՝ մասնակցում է սոցիալական աջակցություն ստացողների անհատական ծրագրերի կազմման աշխատանքներին, ինչպես նաև՝ բաժնի կողմից՝ համայնքում բացահայտված ռիսկային գործոններին վազեցմանն, սոցիալական իրավունքների կոլեկտիվ պաշտպանության մեխանիզմների ձևավորման խթանմանն և պաշտպանության նուղղված ծրագրերի մշակմանը.

ը/ բաժին դիմած քաղաքացիներին ապահովում է խորհրդատվությամբ,

թ/ընտանիքներին տեղյակ է պահում նպաստի վճարումը դադարեցնելու (կասեցնելու), ինչպես նաև այդ ընտանիքի տվյալների փաստագրման ժամկետը լրանալու մասին՝ պարզաբանելով նրանց իրավունքները:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա/ ունի առնվազն միջնակարգ կրթություն, «Սոցիալական աշխատանքի» միջին կամ նախնական մասնագիտական կրթություն կամ այլ միջին կամ նախնական մասնագիտական կրթություն և (կամ) «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկուսուցում,

բ/ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Պետական նպաստների մասին» և «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի ««Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 145-Ն, 1997 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան նպաստի նշանակման և վճարման կարգի մասին» N 562 որոշումների, աշխատակազմի և բաժնի կանոնադրությունների, իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմ նորոշվելու ունակություն,

գ/տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ/ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելուունակություն, տիրապետում է սոցիալական ծառայություններ տրամադրելու գործընթացում կիրառվող համակարգչային ծրագրերին և ունի այդ ծրագրերով աշխատելու կարողությունները հաստատող հավաստագիր:

ե/ իր պաշտոնի անձնագրով նախատեսված դեպքում տիրապետում է (ազատ կարդում և կարող է բացատրվել) օտար լեզվի (լեզուների):

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնների առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցներից մեկի) կողմից զբաղեցնելը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2020 թվականի դեկտեմբերի 1-ը ժամը 10:00:

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ (ք.Երևան, Կառավարական տուն N 3, հեռ. 010515133):

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն